

Հայաստան

ՀԱՅՏԱԳԻՐ-ԿԱՆՈՆԱԳԻՐ

ԻԿԱՆՎՊՁԳՎՅԻՆ

ՆԱԻՆԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ

ԵՐԿՍԵՌ ԼԱՌՅԱՐԱՆԻ



1904-1905

ՂՊՐՈՅԱԿԱՆ ՏԱՐԻ

ԳԱԳԻՐԷ

Մ. Բ.

ՅԱՅՏԱԳԻՐ—ԿԱՆՈՆԱԳԻՐ

Հ Ա Մ Ա Ջ Գ Ա Յ Ի Ն

ՆԱԽՆԱԿԱՆ ԵՒ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ

ԵՐԿՍԵՌ ԳԱՐԺԱՐԱՆԻ

1904-905 Գպրո,ական Տարի

— Գ Ա Հ Ի Ր Է —

ՄՆՊ

ԳԱԶԻՐԷ



Ժողովրդական Տպարան Գահիրէ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԵՐԿՍԵՌ ՎԱՐԺԱՐԱՆ

Ն Պ Ա Տ Ա Կ Ե Ի Ո Ի Ղ Ղ Ո Ի Թ Ի Ի Ն

«Անընդունակ ցեղը կամ անընդունակ դուրսը պիտի կոչուածանի, ինչպէ՞ս որ ստորին ցեղ մը միշտ տապալուած է բարձր ցեղի մը անընդհատ հարուածներու տակ:»

C. Mahan

Բնութեան անայլայլելի օրէնքին ենթակայ, մեր ալ գոյութիւնը կ'սխուածուի մեր աշխատելու, մրցելու և ապրելու ընդունակութենէն. եթէ ջանայինք մեզ չըջապատող մըրցակից ցեղերու մէջ ընդունակութեամբ բարձրը դիւրբ մը պահել՝ կ'ապրինք. հակառակ պարագային կ'անհետանանք. բնութեան օրէնքն է այդ, որը կ'ապացուցանէ ընդհանուր ազդերու պատմութիւնը: Եղիպտահայերս նոյն օրէնքէն չենք կարող խուսափիլ:

Մասնաւոր քննութեան մը հարկ չկայ տեսնելու համար թէ Եղիպտոսի մօտաւոր ան-

ցեալին մէջ հայ տարրը ունեցած է ոչ միայն կարևոր դիրք մը, այլ նաև պատմական դեր:

Այն ժամանակ, սակայն, հայը տեղին ու ժամանակին պահանջներուն համեմատ ունէր մշտաւորական այն պատրաստութիւնը որ հարկէր այդ դիրքը գրաւելու համար, իսկ այսօր, մինչ եզրկատոս միջազգային երկիւք մը դարձած, աշխարհի ամեն կողմերէ քաղաքակիրթ ազգութիւններ կը մրցին այնտեղ իւրաքոնիչիւրը իր գաղութին ամէլի շահաւոր և ամէլի ապահով կացութիւն մը ստեղծելու համար, հայերս կարծես անտարբեր, մի միայն անցեալի յաջողութիւններու յիշատակով բաւականացած, որ և է ջանք չենք ընել որ այդ օրինաւոր մրցման մէջ նոյն իսկ փոքր տեղ մը ունենալու համար՝ պատրաստել մեր նոր սերունդը:

Աւելորդ է ըսել թէ մերձատր ազգագայի մէջ որչափ սուղի պիտի նստի մեզ այդ անտարբերութիւնը: Քաղաքակիրթ ազգութեանկութեան հետ քաղելու անընդունակ դարձած, պիտի դուրս վտարուինք անոնց շարքերէն և հաւանական է, մեզ միակ բաժին պիտի մնայ լոկ անոնց փոշրանքներով գոհանալ:

Թերևս պիտի գտնուին հայ անհատներ որ այդ տխուր վիճակին չմատնուին և շարունակեն պահպանել իրենց ներկայ բարձր դիրքը բայց անհատներս փրկութիւնը հասարակութեան թշուառութեան արգելք չըլլալու եւ միթէ՞ այդ անհատները իրենց վզին ծանր կախ-

ուած պիտի չզգան զբեթէ ամբողջ հասարակութեան մը թշուառութիւնը, որը այսօր իսկ ամբողջութեամբ այնչափ զոհուած թիւններու ենթադրուած են:

Հասարակական գործի զուտ եղող ամէն մտածուի պարտականութիւնն է լուրջ կերպով խորհիլ և միջոցներ ձեռք առնել այդ ընկերական աղէտքի դարմանին համար, որը մեր կարծիքով կրնայ ըլլալ մի միայն լուրջ և հաստատուն հիմերու վրայ դրուած կրթական պատրաստութիւնով մը, մանաւանդ մեզ նման ազգի մը համար որը պայտօթեան կռուի մէջ միայն մէկ միջոց կարող է ունենալ՝ այն է զինքը կազմող անհատներու կրթական արժանիքը:

Դժբաղդաբար ազգային իշխանութիւնները ժամանակ չեն ունեցած այդ կարևոր պէտքը իրենց լուրջ ուշադրութեան առարկայ ընելու. արդէն դժուար ալ պիտի ըլլար անոր իրագործումը շատ մը պատճառներով:

Իսկ ծնողները, իրենց զաւակներուն ապագայով մտահոգ, ուրիշ միջոց չեն գտած շատ անգամ, բայց եթէ օտար՝ Եւրոպական ըսուած վարժարանները դիմել, այն տեղէն տկնիակելով իրենց զաւակներու հոգեկան և մտային սնունդը, ֆիզիքական կազմակերպումը:

Սակայն դժբաղդաբար այդ օտար վարժարանները մեծ մասամբ միաբանական հիմնարկութիւններ են, իսկ թէ այդ հիմնարկութիւնները փոխանակ օգուտ մը տալու ի՞նչ ահաւոր

վնաս կը հասցնեն մատաղ սերունդին՝ անոր հոգին ու միտքը եղծելով՝ արհեստական ու դիտաւորեալ ուղղութիւնով մը այլանդակելով անոր ամբողջ էութիւնը. ատոնց մասին՝ իմ խօսիլս աւելորդ է: Ներկայ Եւրոպական յառաջագէտ, իսկապէս ազգի օգուտով դբազուող հասարակութիւնները և մանաւանդ անոնց առաջնորդ մեծ մտքի մարդիկը արդէն շատ որոշ կերպով իրենց կարծիքը յայտնած են այդ հիմնարկութիւններու մասին. կարծիքը միայն, աւելին իսկ, իրենց ամբողջ գոյրոյթը, որով՝ կազմակերպուած անխոնջ հալածանք մը կը մղեն այդ հիմնարկութիւններու դէմ, ազատելու համար իրենց ազգի նոր սերունդը այդ ապականուած ընկերութիւններու ցանցերէն, ընկերութիւններ՝ որոնք ժամանակի ոգւոյն պահանջներուն բացարձակապէս հակառակ, փոխանակ տղուն միտքը, գիտակցութիւնը զարգացնելու, կը սպաննեն անոր մէջ մաւածող, գատող էակը:

Անտարակոյս այդ միաբանական վարժարաններէ զատ կան կառավարչական և աշխարհական (Laique) մի քանի ընտիր վարժարաններ, սակայն անոնք ալ մեր պէտքերուն բաւականութիւն տալէ հեռու են. նախ շատ քիչ են, և նպատակներն միակողմանի է. օրինակ կառավարական վարժարանները միայն կառավարութեան պաշտօնեաներ կը պատրաստեն: Երկրորդ անոնցմէ ոմանք նիւթապէս գրեթէ ան՝

մատչելի են: Այդ վարժարանները վերջապէս
լրիւ գոհացում չեն կրնար տալ, նոյն իսկ սա
միակ պատճառով որ հայկական չեն:

Նեղմիտ ազգասիրական տեսակէտով չէ որ
հայ սերունդի համար հայկական վարժարան մը
անհրաժեշտ կը նկատեմ, այլ գիտական, բը-
նախօսական օրէնք մ'է, որ եթէ սերունդ մը
այլասերման և ոչնչացման չենք ուզեր մատնել,
հարկ է անոր մանկութեան և պատանեկու-
թեան կրթութիւնը հիմնուած լինի իր ցեղային
յատկութիւններու վրայ, անշուշտ միշտ գի-
տութիւնը ուղղեցոյց ունենալով: Այդ նախա-
պատրաստութենէ յետոյ է որ կարող է առանց
վտանգի որ և է միջազգային կրթութեան մը
հետեւիլ: Եւ վերջապէս ինչ պատճառ ունինք
իրր ճշմարիտ հայ և կատարեալ քաղաքացի
չապրիլ Եզրպտական ազատ հողի վրայ, ինչու՞
ուժ չտանք մեր ազգային գոյութեան պահ-
պանման այսպէս ազատ երկրի մէջ քանի որ
մայր երկրի մէջ այնչափ բուռն հալածանքի
ենթարկուած ենք:

Մեր մէջ դասակարգ մը կոյ որ ազգու-
թիւնը աւելորդ ինչք մը նկատելով նոյն իսկ
պատիւ և բարձր զարգացման մը նշան կը հա-
մարի զայն ուրանալը: Բայց պահ մը երևա-
կայենք կրթուած Անգլիացի մը, Յրանսացի մը,
վերջապէս որևէ Եւրոպացի մը որ իր ազգու-
թիւնը ուրանար և բնաւ չհետաքրքրուէր, չը
չահազրդուէր իր ազգի գործերով և մերժէր

որ և է միջոցով անոր բարձրացման աշխատիւ-
լինչ տպաւորութիւն պիտի ընէր մեր վրայ այդ
անհատը, միթէ՞ պիտի չզգայինք անոր մասին
հակակրօնք մը այնչափ բուռն, որչափ որ կըզ-
գանք բնութենէն այլանդակուած հրէշի մը
հանդէպ. և միևնոյն պարագային նոյն կեր-
պով և նոյն իսկ աւելի խոր հակակրօնքով չը-
պիտի վերաբերուի դէպի մեզ քաւտքակիրթ
Ներոպացին:

Արդ, անհատական թէ ցեղային անասկէ-
տով քննուած, մեր գոյութեան պահպանման
համար անհրաժեշտ է լուրջ պատրաստութիւն
մը վարժարաններու միջոցաւ. վարժարաններ,
սակայն, որ գիտական հայեցակէտով ըմբռնած
ըլլան նպատակը և գիտական միջոցներով ջա-
նան այդ նպատակին հասնելու: Ահա այդ կեն-
սական պէտքին մասամբ զո՞հ սցում տալու հա-
մար է որ կը ձեռնարկենք այս համազգային
նախնական և երկրորդական երկսեռ վարժա-
րանի հիմնարկութեան:

Ընտրեալ ուժերէ կազմուած ուսուցչական
խումբ մը մեզ պիտի ընկերահայ այդ կարևոր
գործին մէջ:

Մեր ուղղութիւնը լինելու է գիտական-
մանկավարժական, ոչինչ պիտի խնայենք ա-
ռողջ մարմնով անհատներ, ճշմարիտ հայեր,
կատրեալ քաղաքացիներ, կեանքի ասպարէզի
համար հիմնապէս մարշուած անհատներ պատ-
րաստելու համար:

